


ԲԱՅԻՆ ԲԳԱԳԻՆԵՆԷ
Թարգմանում 14 դրան
Գառնակներում 20 դրան

ԱՌԱՅԻՆ ՏԱՐԻ
Թուրքիայում 4 րբ. 50 Լ.
Թուրքիայում 50 դրան
Երևանում 12 ֆրանկ
Ամերիկայում 2 տոլար 5 ս.
Յայտարարվածների վճարը
Առաջին երեսում տողատեղը 10 շահի
Զորքերը 5

ԱՌԱՅԻՆ ՏԱՐԻ 6 շահի

Խմբագրության հասցեն՝ Թարգման
ՄԻՏԻՔ-ի խմբագրություն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

1. Մեկ գրողներին խնդրում է գրել պարզ, մաքուր և անպայման բոլոր առարկաների վրա...
2. Խմբագրությունը իրեն է վերապահում իրաւունքը...
3. Մենք մերժում ենք... ի և չի... ի սրտագրական...
4. Չպարտաւորւած կարճ յօդուածները չեն վերադարձուում...
5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուան...
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն գերծ է համարում պատասխանատուութիւնը...
7. Չպարտաւորւած յօդուածները համար խմբագրութիւնս բացառութիւններ չի տալիս...
8. Հասցէները փոխելու համար պէտքէ մեկ ուղարկել 2 դրան 10 շահի

ԾԱԽՈՒՏՈՒՆ

Ծախուում է հանգուցեալ Նիկողայոս Մեկի Բարաշանեանի տունը, որ գտնուում է Ղալի Բագան թաղում։ Տունն ունի փողոցի կողմում երկու սենեակներ, երկուական ընդարձակ սանդղախանաներով իրենց յետևում։ Այդ սենեակների հանգեպ՝ բակի միւս կողմում կայ մի ընդարձակ հիւրասենեակ մի փոքր նախասենեակով։ Յետևում կայ նաև մի փոքրիկ բակ խոհանոցով և թնրատնով։ Զերգամիները ըստ ամենայնի յարմարաւոր են։ Գնել կամեցողները թող բարեհաճեն դիմել Արամեան դպրոցի հոգաբարձուներին պ. Ա. Բարխուդարեանին և կամ պ. Գր. Մելիք-Ազարեանին 5—5

ՄԵՐ ԻՆՏԵՆՍԻՎԵՆՅԱՆ

Մեր նախորդ յօդուածի վերջում յանգանք տխուր եղբակացութեան թէ Ինտենսիւս չուներ։ Այս խոստացանք պարզել թէ Ինտենսիւս կամ եղածն Ինտենսիւս։ Անցնենք այդ պարզաբանութեան։ Արդէն ասացինք, որ մեր... այսպէս կոչուած... Ինտենսիւսը... ցիւսն այդ բառով հասկանում և հասկացնում է երեսաստղութիւն գաղափարը։ Վերցնենք հէնց այդ եզրը նոցա հասկացողութեամբ և վերլուծումներ կատարենք։ Յաւն այն է, որ երիտասարդութիւնը ևս մեզանում մի լուրջ, միապաղպաղ, հզօր և առողջ մի միութիւն չէ՝ ինչպէս այլ ժողովուրդների մէջ։ Ունինք երիտասարդներ, որոնք այդ հասակում արդէն մաշուած, յոգնած, անեղանդ և հոգով վաղուց ծերացած ու անպէտք են մեր հասարակութեան համար, քան այն հասակաւորները, որոնք իւրանց խաւար ժամանակում, ըստ կարեաց և պատրաստութեան, առաւել օգտակար են եղել ու գործունեայ իրենց շրջապատի համար, քան մեր նոյնքը։ Խմբագրութեանն ու հոսանքները մեր երիտասարդութեան մէջ այնքան քիչ են, գաղափարական յողաւորումն այնքան աննշան, որ մենք գրեթէ գործ ունինք իւրաքանչիւր մի անհատ երիտասարդի հետ, փոխանակ խմբակցութեան։ Վերցնենք դեռ այն երիտասարդութիւնը, որ գիտաստղի նրման երբեմն, թէև շարունակ ու

երկչուտ, երևան է ապիպոյց... Կատմի գործչի ու հակառակորդի բամբասել ու արատաւորել ձգտելիս։ Ինչն է կազմում այդ քիչ թէ շատ շարժուող, ընդունենք նաև, սուր հետաքրքրութիւն ցոյց տուող երիտասարդութեան յատկանիշը։ —Այդ երիտասարդութիւնը նախ և առաջ sqts է և ինսուսակ, զուրկ որ է սեւեռուն աշխարհայեացքից. երկրորդ նա համակերպող, շոյող է դուրսեան տէրերին, աթոռամոլ և հասարակական դասալիք, երբ նոյն հասարակութեան համար գործ ու կողով, տոկունութիւն ու անձնութիւն է պահանջում։ Թող ձեզ չհիշեք նրա շիք կամ ա լա ֆրանկա արտաքինը և Եւրոպական լեզուներ մի քանի բառերի թոթովումն ու թուրքականութիւնը։ Մտաւորապէս կամ մտքի պաշարով նա նոյն սահմանափակ ուղեղի տէրն է, որպիսին էր նա երէկ երբ դեռ աշակերտ էր։ Նա չի կարգում, չի առաջդիմում։ Հարցէք նրան ամենաընդհանրահայ հեղինակներից, օրինակ, Բաֆուց, Երվանդազէից, Ահարոնեանից, Մուրացանից, Լէօ-ից, Նարդոսից և այլն, և դուք կտեսնէք որ այդ գովումն եւ ինքնագոյն երեսաստղութիւնը ոչինչ, կամ շատ քիչ բան է կարգացել իւր «անմահ» հեղինակներից։ Ծայրայեղ դէպքում՝ պահպանողականութիւնից անդր չանցնող այդ երիտասարդութիւնը, որ մտավարդութեան կամ յետադէմ չհամարուելու երկիւղից

երէկ «Մշակ» էր ստանում, այսօր արդէն «Հորիզոն»ի է բաժանորդ, չնայած նա ընդհանուր ոչինչ չունի այդ թերթի հաւատարմի հետ և «սկզբունքներով» անգամ տրամագծորէն հակառակ է նորան և նորա «վնասակար» ուղղութեան։ Յայտնի է թէ մեզանում, դեռ դժբաղդաբար, սկզբն են դուրսեան սէրեր։ Արդ, նայեցէք ձեր շուրջը և դուք թերեւս մի երկու տասնեակով համարէք մեր վերոյիշեալ երիտասարդներին։ Ունի, կատարուում և ազգակործան են համարում այդ սէրերին և սակայն՝ ընտրութիւններին դուրս են գալիս իրենց հայհոյածների թեւերի տակ կամ իբրև նոցա թեկնածուներ՝ զանազան «ութեանց» մէջ աթոռներ գրաւելու։ Այդպիսիք յաճախ չեն անցնում, մնում են կիսաճանապարհին և փոխանակ դրանից խրատուելու, իրենց խեցիւմ պարփակուելու և համեստութեան դաս առնելու, ընդհակառակը Արամազեան նմապրոպներ են տեղում և թուր բաժին հանում հայ ժողովուրդին, որ իրենց նման «մեծութիւնը» թողած՝ հասարակական պաշտօնի է կոչում իրենցից «ցածերին» անուստ մնալին (??) և ոչ իրենց պէս հոշակեալներին։ Ինչ ասել այդ իրենց Գրէյ ու Զէմբլէն համարողներին, որոնց համար հայ իրականութիւնը ճշատ փոքր է և «ապերախտ»։ Ինչ ըստպես այդ երիտասարդութիւնից, որ անսկզբունք է, անողնայար, մտավախ, աթոռամոլ և իմաստակ։ Ինչ կլինի այն հասարակութիւնը և Ինչ կլինի այն հասարակական գործերն ու հիմնարկութիւնները, որոնց «ղեկավար» և «գլուխ» կկանգնեն այս տիպի երիտասարդները։ (Շար) -Ex nihilo, nihil

նրմա» (Ռանվիրայ) շարախարհի խմբագրապետ պրոֆէսոր Յովհաննէս Գրիգորեանը իւր թերթի 33 համարում մի գեղեցիկ և իմաստալի խմբագրական է գետեղել Անգլիական Արքունի ընկերութեան 250-ամեայ պատմական յօդուածն աթիւ, ահա այդ խմբագրականի թարգմանութիւնը ենք տալիս «Միտք»-ի բանասէր ընթերցողներին։ Միհրան Բաղդասարեան

Մի քանի օր առաջ Լոնդոնում Անգլ.Արքայական ընկերութեան 250-ամեակը հանդիսաւոր կերպով տօնախմբեցին։ Այս ընկեր. փառքը «Արքայական» լինելում չէր կայանում, այդ անունը դիպուածական մի հանգամանք էր միայն, իսկ դա իւր հընչակն ու համբաւը պարտական է բոլորովին մի գիտական հաստատութիւն և մասնաւորապէս Բնական Գիտութեանց զարգացմանը նուիրուած ակումբ լինելուն։ Անգլիոյ ամենամեծ գիտականները և մեր օրերում Լորդ Բէլլին և Լորտ Լիստոնը նախագահել են այդ մեծ ընկերութեան։ Տեսէք Անգլիոյ նման մի մեծ ազգի մեծագոյն մարդիկ որպիսի մի հոյակապ նպատակի ծառայելու համար են միացել։ Հարստութիւն դիպելու համար չէ կազմուել այդ ընկերութիւնը, ոչ էլ ազգային գոյութիւնը պահպանելու, կրօնի սկզբունքները տարածելու, կամ «Ազատ Որոշողութիւն» նման անգամակիցների անձնական շահերը ապահովելու չի ձգտում նա, այլ այդ պատկառելի ակումբի միակ նպատակն է եղել և է մեզ օգտաւարող Բնութեան գաղտնիքների խոր թափանցելու օրէնքները գտնել եւ նորա ոյժով ու գորութիւնը նուաճել։ Որքան անգրաւելի մի ձեռնարկ... այնպէս չէ՝ եւ սակայն նայեցէք այդ 250 երկար տարիների միջոցին նէվտոններ, Գալիլէոներ, Հըքսլիներ, Գէյլիներ և Լիստոններ ոգևորուել, հմտուել և տարուել են այդ մեծ նըպատակով և իրենց ամբողջ բեղմնաւոր կեանքն ու գոյութիւնը յօժարաւոր նուիրել են Բնութեան ուսումնասիրութեանը և խելագարվածներ։ Ինչ վախել, ինչ գուարճութիւն ունենալ զբանում։ Մենք հայերս սո-

վորաբար այսպիսի ոչ թէ 250 տարիներ, այլ 250 կարճ օրեր անգամ չենք ցանկանում յատկացնել: Նայեցէ՛ք մեր լայնատարած երկրի մէկ ծայրից դէպի միւսը և ասացէ՛ք ինձ թէ քանի՜ անձնաւորութիւններ կարող էք գտնել, որ Բնութեան հետազոտութեամբ և բնական օրէնքների ուսումնասիրութեամբ զբաղուած են: Մարդիկ առհասարակ հացի խնդրով են զբաղուած, իսկ ներթափան կարողութեան տէրերը իրանց քէֆի ու գուրմանութեան ետեւից են ընկած, թերթի, գրադարանի, դպրոցի և այլն օգնելը յիմարութիւն է համարուում ունեւորների համար: Շատ շատ ուսումնարաններում և համալսարաններում թուրքալորէն գիտական ժօրիլմերի աւանդումն կհանդիպէ՛ք դուք: Արդէն գտնուած օրէնքները մենք անգիր անելու պատրաստ ենք, սակայն դեռ ևս անձանօթ ֆնացած օրէնքները գտնելու սկսած չենք տակաւին:

Այո, Բնութեան ոյժերը և բնական օրէնքները մեզ համար ոչ մի նշանակութիւն էլ չունին: Ահա Եւրոպական և Ասիական քաղաքակրթութեան միջև եղած անագին տարբերութիւններից և ամենաէական հանգամանքներից մինն էլ այս է, այսինքն «Բնութեան Ուսումը»:

(Շար.)

Մ. Բ.

Պարոն ՀԱՄԱՐՁՈՒՄ ԱՌԱՋԵՆԱՆԸ
Կենսոնական դպրոցի մասին

Պարոն Համարձումը քանի լուրջ փորձերով և անհատական ջանքերով է, որնա եկել է իբրև լիազօր խնամակալ՝ կենտրոնական դպրոցի շուրջը որոշ ստուգութիւններ կատարելու կամ առ տեղեան ամեն ինչ իմանալու, ուստի խնդրեցինք մեր տեսակցութիւններից մէկի մէջ՝ յարգոյ խնամակալին, տպագրութեան համար, մեզ յայտնէ թէ ինչ է արել կամ ինչ միտախոյով է եկել այդ առթիւ:

— Դեռ մի քանի զրաւոր հարցեր եմ տուել բաւական առաջ՝ կենտրոնականի հոգաբարձութեան և սպասում եմ նոցա զրաւոր պատասխանին, ասաց պ. Առաքելեանը: Պատասխան ստանալուց յետոյ՝ կասեմ Ձեզ թէ ինչ է կատարուել մեր մէջ և կյայտնէք այդ «Մտքի» ընթերցողներին:

Անցաւ 10 օրից աւելի: Մենք նորէն հանդիպեցինք պ. Առաքելեանին: Իմացանք, որ հոգաբարձութիւնը դեռ էլի չէ տուել իւր պատասխանը: Այնուամենայնիւ նա հաղորդեց մեզ հետեւեալ ի տպագրութիւն:

«Բարեգործ Եգոր Չոհրաբեանը վախճանուելիս կտակատարներէս կանչելով՝ արեց այս կտակը.— 75000 ռուբ. նուրբել Ստրպատականում հիմնուելի թեմական հոգեւոր դպրոցին կամ՝ ըստ կտակի բառերի Епархіальная семинарія-ին: Իսկ յայտնի է որ այդ կարգի սեմինարիաները լինում են հոգեւոր դպրոցների և եկեղեցիայ հոգեւոր իշխանութեան: Մինչ մենք կտակարարներս մտածում էինք թէ ինչպէ՛ք ձեռնարկենք գլուխ բերել հանգուցեալի կամքի և կտակի նշան կատարումը, վրայ հասաւ Կար. Վարդը և առաջարկեց մեզ՝ ամբողջ գումարը հէնց իսկոյն տալ իրեն, որովհետեւ, ասաց, հիշ

այդպիսի մի թեմական դպրոց արդէն բացուած է Թաւրիզում: Սակայն՝ որովհետեւ մեզ համար պարզ չէր այդ դպրոցի տիպը և էութիւնը, մենք զօրաւարացանք դրամ տալ Կար. Վին, առարկելով նաև որ, ըստ կտակի տրամադրութեան, այդ դպրոցը պիտի ենթարկուի Կաթողիկոսի գերիշխանութեան, ունենայ Վեհից հաստատեալ կանոնադրութիւն և ծրագիր: Կ. Վ-ը խոստացաւ անմիջապէս դառնալ էջմիածին, ընդ փոյթ հաստատել կանոնադրութիւնն ու ծրագիրը, ուստի թող իրանք փողը հէնց հիմա համարեն իրեն: Կ. Վ-ը իր բացած կամ բացուելիք դպրոցն այնպէս ներկայացրեց— հէնց Ձեր ուզած դպրոցն է— չէշտեց, որ մենք քիչ միամտեւորով ասացինք, առ այժմ մենք միայն դրամի տոկոսիբը կտանք, մինչև որ յետոյ ժամանակ կունենանք դպրոցի մասին մօտիկից տեղեկանալու և դրամների մասին էլ որոշ ու վախճանական տնօրինութիւն անելու»:

«Անցան շուրջ 3 տարիներ: Եւ մենք տեղեկացանք որ դպրոցը այն չէ՛ ինչ պէտք է լինէր ըստ կտակի, կամ ինչ ներկայացրել էր մեզ Կ. վարդապետը — վերջերս եպիսկոպոս Յաւալին այն է, որ դպրոցի համար ամեն ինչ անող, անգամ փոխարքային խնդրամացոյց եղող — տոկոսիբների առթիւ-Կ. եպիսկոպոսը հոգաբարձութեան մէջ ոչ մի կարեւոր դեր ու ձայն չէ ունեցել և իբրև թեմակալ՝ որ պէտք է նախագահ լինէր հոգաբարձութեան, չունէր և չի ունեցել այդպիսի հաստատուն դեր ու տեղ և միջոցաւ իր իշխանութիւնը անուանական հանգամանքները սեմինարիան կամ հոգեւոր դպրոցը, իր մէջ չի ունեցել, ոչինչ կրօնական և այնտեղ ամեն ինչ տնօրինողը եղել է հոգաբարձութիւնը միայն՝ կամ բացառապէս տեսուչը: Մի խօսքով սրբազանն այնտեղ ոչինչ ձայն չի ունեցել և փոխանակ նախագահողի, վարդի՛ եղել է առ նուազը... հետեւողը և ընդունողը այն վճիռների, որոնք կայացել են հոգաբարձութեան կողմից»:

«Այժմ ես Թաւրիզում եմ՝ բանակցում եմ հոգաբարձութեան հետ: Տեսնում եմ որ դպրոցը նախ և առաջ չունի մի կանոնադրութիւն, մինչդեռ այդ ամենից առաջնակարգն է ու կարեւորը: Ի՞նչ դպրոց է այդ, ում ենթակայ, ում հաշուետու, աշխարհական է թէ հոգեւոր, ոչինչ յայտնի չէ, որովհետեւ կանոնադրութիւն չունի, ինչպէս ասացի: Նա անգամ կարգին ծրագիր չունի: Թէպէտ ասում են Ներսիսեան դպրոցի ծրագրով են ընթանում, սակայն եթէ այդպէս է, ուր են նրա կրօնական առարկաները»:

«Եւ հոգաբարձութեան ասացի, ինձ համար պարզ պէ՛տք է լինի իբրև խնամակալի, որ արեւօք սա Վեհափառ կաթողիկոսին, ապա և նրա փոխանորդին—առաջնորդին — պիտի ենթարկուի թէ ոչ: Որովհետեւ, հակառակ դէպքում, թէ ըստ կտակի և թէ ըստ ուս. պետական օրինաց՝ մենք այլ ևս չենք կարող մի ոչ-հոգեւոր դպրոցի, որ չէ ենթարկուում էջմիածնի գահակալի իշխանութեան, դրամ ու նպաստ տալ: Որովհետեւ չի կարող լինել մի հոգեւոր դպրոց, ուր այնտեղ կրօնի, գոնէ նուազագոյն չափով, դասեր չլինին»:

«Հոգաբարձուներն ասացին, որ ի-

րենք հէնց այսպիսի մի դպրոց ասացել են թեմ. Ժողովից և աւելի իրաւասութիւն չունին նման հարցերի պատասխանելու և քանի որ իրենց մի տարի ժամանակամիջոցն է ֆնում և արդէն խումբ ու տեսուչ վարձել են, խնդրեցին այս տարուայ տոկոսիբը տալ»:

«Այս տարուայ համար, ասացի, կտանք տոկոսներ, բայց առաջիկայից այդ տիպի դպրոցին մենք ոչինչ չունենք տալու և չենք տալ, որովհետեւ դա չէ ներկայացնում այն դպրոցը, որ պէտք է օժանդակուի ու պահուի հանգուցեալ պ. Ե. Չոհրաբեանի կտակած գրաքննութիւնը»:

«Ըստ կտակի պ. Ալեքսան, երբ իրականութիւն չունեցաւ հիմնուելի թեմական հոգեւոր դպրոցը, և ոչ «կենտրոնականը», որպիսին կոչուում է այսօր, այդ դէպքում մենք այդ կտակեալ դրամը, ըստ կտակի, պիտի յատկացնենք Թաւրիզի դպրոցներին մինչև՝ դարձնելով այդ հոգեւոր թեմ. դպրոց և ենթակայ էջմիածնի Պետին և կամ նրա տոկոսիբը պիտի բաժանենք Թաւրիզի և գաւառի հայ դպրոցներին: Առ այժմ այս է իրերի դրութիւնը»:

Ապա մենք յարգոյ խնամակալին տուինք արդէն մամուլի նիւթ դարձած այլ հարցեր և ասացանք տխուր պատասխաններ, որոնք յարմար չենք համարում տպել: Առանձնապէս ծանր տպաւորութիւն է թողել այս անցած ուսումնական տարուայ տխուր պատկերը:

Կարծում ենք նշել կարողացանք տալ պ. Առաքելեանի արտայայտած լինողով եղան իրերի դրութեան, էջմիածնի ընթերցողներին և առաւելապէս Թաւրիզի Ժողովրդին է ֆնում մտածել, թերեւ և որոշ չափով ընդառաջել, հանգուցեալ բարերարի անալոյսելի կտակի կատարման և նպաստել որ փրկուի կենտրոնական դպրոցը այն անորոշութիւնից, որի մէջ նա դեգերում է այս վերջին երեք տարիները: Եթէ աշխարհական դպրոց է նա, ապա թող լինի միայն այդպիսին, հոգեւոր է լինելու՝ թող նա ունենայ իր որոշ գոյնն ու ծրագիրը և ունենայ անպայման որոշ խնամակալութիւն, որ իրականացնողը լինի հանգուցեալ Չոհրաբեանի կտակի, վարողը գիտութեան տաճարի և որ այնտեղ չիղնեն կողմնակի ազդեցութիւններ և շահեր «որոշ» մարդկանց:

Ա. Տ.-Վ.

ՎԱՏ ԴԱՍԱԼԻԿՆԵՐ
ԵՒ
ՑԱԾ ՈՒՆԵՏԱՐՈՒԹՅՆԵՐ.

Այդպէս կնքեցինք մենք այն «հերոսին», որոնց տխուր պատկերը դուրս էր բերուած պ. Հ. Առաքելեանի խմբագրութեամբ հրատարակուող «Արօր» ամսագրի № 5-6-ի «Հայկական կեանք» բաժնում:

Մարդիկ, որոնք իրենցից դուրս ամենքին վատ, երկչոտ, բէականէր, խաւարամիտ, պահպանողական, հակա-յեղափոխական, մատնիչ, ուխտադրուծ, և այլ նման մակերիներով են միշտ պատուել, իրենց կարծեցեալ «կարմիրներ» ներկայացնելով, առաքելութիւն չունին և չեն ունեցել դատաւարութեան ժամանակ խոստովանելու այն,

ինչ են կամ եղել են իրօք: Եւ դեռ վատարանց ու մեծախօսների այդ խմբակը յանդգնութիւն է ունեցել հայ ազգի «փրկիչ»-ը հանդիսանալ և հասարակական մտքի ղեկավարի մօնօպօլը վերցնել:

Որքան վեհ, դիւցազնական և քաջալերական է եղել Գաղատիոյ ճակատագրաւոր Հնչակեանների դատուիլը Տաճկաց դատարանում, ուր գիտակից և անձնուէր մարտիկները անվեհեր խոստովանել են իրենց Հնչակեան լինելը, պարզել են Հնչակեան կուսակցութեան ծրագիրը, նպատակը, դիրքը և վճռաբար յայտարարել են որ իրենք և իրենց կուսակցութիւնը անվերապահ կուր են յայտարարել Օսմանեան դեսպոտիզմի դէմ և լուեցուել դատարանում, ապա համարձակ քայլել դէպի մահ և դէպի կախաղան, նոյքան փողը, խղճուկ և տմարդի են եղել մեր ազգի «միակ պաշտպանները», որոնք ուսական դատարանում դատուելով՝ մեծից մինչև փոքր՝ ուրացել են իրենց Դաշնակցական լինելը:

Սակայն մենք լսենք «Արօրին» և լաւ զգանք, թէ Դաշնակցութեան լինողներով հարկ է վճարել տարաբաղդ հայ ազգը և նոյն միջոցներով մեր «փրկիչները» կուր կոպել են նրա ստրկութեան շղթաները:

«Մեր նախորդ տեսութեան մէջ տեղեկութիւններ տուինք՝ Դաշնակցութեան դատի մասին, որ այս տարուայ սկզբին քննուեց Պետերբուրգում կառավարիչ սենատի մի առանձին ատեանի ձեռքով: Դատաւճիռը արտասանուեց մարտի 19-ին, որով 94 հոգի ամբաստանաւորներից անպարտ արտաքսուեցին, 1-ը միայն դատաւարատուեցին աւելի կամ նուազ խիստ պատիժներով:

Դաշնակցական այդ դատը և սենատի վճիռը, կարելի է ասել, մաքրեց-ազատեց միջնորդութեան մի սոսկալի կօշմարից, որ ծանրացել էր հայ հասարակութեան կուրծքին: Ամենից առաջ՝ շատ յարգելի անձինք, որոնք գուր տեղը ընկել էին ամբաստանութեան տակ և տառապում էին, գտան իրանց ազատութիւնը և անդորրութիւնը: Երկրորդ՝ այդ դատը համոզեց կառավարչական և դատաստանական բարձր շրջանները, թէ որքան անիրաւացի, անարդար և անտրամաբանական էր ձգտումը՝ վերագրել ամբողջ հայ Ժողովրդին, ինչ որ միայն մի որոշ խմբակի ձեռքի գործն էր: Երրորդ, որ Դաշնակցութիւն կոչուած կուսակցութիւնը իրան այնքան խղճուկ, ոգորմելի և անսկզբունք ցոյց տուեց, որ եթէ դեռ կար հասարակութեան մէջ յարգանքի կամ համարումի մի թեթիւ զգացումն դէպի այդ կուսակցութիւնը իբրև յեղափոխական կուսակցութիւն, այդ ևս անհետացաւ: Ամբողջ դատի ընթացքում չգտնուեց մինը, որ քաջութիւն ունենար հինի ու համարձակ յայտարարել, թէ այո, ինքը պատկանում է Դաշնակցութիւն կոչուած կուսակցութեան, թէ որոնք են այդ կուսակցութեան սկզբունքները, հաւատամբը, թէ ինքը գործել է համոզմունքով, հաւատով, որ գաղափարական գործ է կատարում և այլն. մի խօսքով՝ ոչ մինը ցոյց չտուեց այն վեհ պատկերը, որ մենք սովոր ենք նկատել օտար ազգի յեղափոխական գործիչների մէջ: Դատաւարութեան ժամանակ երեւան եկող փաստերը, ի-

վորաբար այսպիսի տոներագծել իր գեր-
ներս չենք և նրա քարոզը և որոշումը
հրաժարելով «ստոր և ստորուկ» աշ-
խարհից:

Ինչպիսիք բացատրել, որ Արու Լալա
Մահարիի պատմական կամ ենթադ-
րական գեղմը ու գործը բանաստեղ-
ծական յղացում է առաջացրել Իսա-
հականի մէջ: Դրա համար անհրա-
ժեշտ է մի յետադարձ հայեացք ձգել
բանաստեղծի անցած գրական ճանա-
պարհի վրայ:

«Կայծ» ամսաթիւ
Օրգան Սօց-Դեմ. Հնչակ. Կուսակցութեան
Պօլսոյ Ուսանողական միութեան
№ 1 Յունիս, Բ. տարի
(Շարունակելի)
Գ. Անանուն

ԹՂԹԱՎՑՈՒԹԻՒՆՆԵՐ

10 Օգոստոս Միանդար
Միանդարից 3 ժամ հետադարձ-
ութեան վրայ գտնուում է Ղարինճա
գիւղը: Միւրգա Այգասուրոյ յան-
կարծ կէս գիշերին պաշարում է այդ
գիւղը 50 ձիաւորներով և երկու կող-
մից սկսում է սաստիկ կռիւ, որ տե-
ւում է 12 ժամ: Պաշարուածները կող-
մից կորուստ եղել է սպանուած՝ ութ
մարդ և մի կին, վիրաւոր՝ եօթ: Պա-
շարողների կողմից սպանուած է մէկ
և վիրաւորուած 7, ինչպէս արգէն հե-
ռագրուած է ¹⁾:

Զարինճա գիւղը յայտնի Զազու-
նըն է. գիւղը կառավարում է Զազու-
փոքր որդին՝ Միւրգա Մահուրը: Վեր-
ջինս թշնամու վրայ տալն ու ոյժը
հիմախ խանի մօտ: Ինչ ինչէր ինչպէս
լուծւում է, 12 ժամ կուռեւոյց յետոյ՝
գիւղը թողնում է թշնամուն և փախ-
չում Շէխ Ջէլալի մօտ:

Միւրգա Ֆաթմայի Զազին վայե-
լում է օսմանցոյ դրօշակի պաշտպա-
նութիւնը, իսկ նորա, 2 մեծ որդիներ-
ը գնացել են Ընդդէմ շահաւոր Տեմալեհա-
ճի էլիանին այս մասին ինչ կկարգադրի:
Սովուշ-Բուլդի դատաւոր Մար-
գար Մուրթին ամսից ի վեր Սապուն
Զալայուն է և չի իմացում ո՞վ է
Ֆիւրդատանի դատաւորը: Սորանով յայ-
տնում ենք ի գիտութիւն մեր կառա-
վարութեան և իշխանաւորների, որ
Ֆիւրդատանը գտնուում է ինչ որ մի
խորհրդաւոր շրջանում: Պէտքէ մի
արթնուն հակողութիւն, որ անակնկա-
լներ չպատահին այստեղ:

Անցորդ

ԲԱՅՆԱՄԱՐ

Առաջնորդարանին կամ Ասրայասականի
թեմական խորհրդին.

Դեկտեմբերեան դէպքերին ար-
ժանապատիւ Տէր Հմայեակ քահանայն
ուսու դօրքին ցոյց տուած աշակցութե-
ան համար՝ հրաւիրուել էր ստանա-
լու 100 ռուբլի: Արժանապատիւ հայ-
րը ազնուաբար հրաժարուելով ընդու-
ներ յիշեալ դրամը, հիւսկատաւարանն
այդ ուղարկել էր առաջնորդարան, որ-
պէս զի վերջինս այդ գումարը տէր
հօր գիտութեամբ բաժանէր թաւրիչի
աղքատներին: Սորանով կառավարիչի
հրապարակով հաշիւ տալիք թէ այդ

¹⁾ Մեզ հեռագիր չի հասած . ծ. խ.

100 ռուբլին էր, որոնց և ինչպէս էք
բաշխել:

Առ այժմ պարան՝
ԲՃ. Պ. Ասլանեան
22 Օգոստոս 1912 թ.
Թաւրիչ

ՆԱԽԵՐԱՐՈՒԹԻՒՆ

«Միս» քաղաքների յարգելի
խմբագրութեան

Թաւրիչ 22 Օգոստոս
Խորհրդի մի անկիւն շնորհել այս
նամակին Ձեր յարգելի թերթի մէջ:
Ցարգանքի և համակրութեան այն
ցոյցերը, որ արտայայտեց ինձ «Մշ-
կի» և իմ գործունէութեան համակրող
Թաւրիչի հայ հասարակութեան որոշ
մասը, թէ այցելութիւններով, թէ ըն-
տանեկան հաջորդութիւններով և թէ այն
հաւաքական բանկետով, որ ամսին 21-
ին տրվեց Արամեան դպրոցի դահլի-
ճում և որի ժամանակ արտասանված
ճառերի մէջ աւելի ցայտուն կերպով
շեշտվեցին այդ յարգանքը և համակ-
րութիւնը՝ ինձ վրայ բարոյական
պարտք են դնում հրապարակօրէն խո-
րին շնորհակալութիւն յայտնել համակ-
րող հասարակութեան, երեկոյթը կազ-
մակերպողներին և նրան մասնակցող
տիկնանց ու պարոններին:

Մեկնելով Թաւրիչից և տանելով
քաղցր յիշողութիւն այդ ամսին մա-
սին, ես պէտք է կրկնեմ, ինչպէս
յայտնեցի բանկետի նախագահ Դօքտոր
Ասլանեանի ողջոյնի ճառին տուած իմ
պատասխանի մէջ, որ այդ հրապարա-
կական տարանս և համակրութեանը
արժանութիւններին, այլ այն սկզբունքնե-
րին, գաղափարներին, որոնց դրօշա-
կակիր է հանդիսացել «Մշակը» 40
տարիներից ի վեր և այն ողջամիտ,
առողջ, ազգային — առաջադիմական
քաղաքականութեան, որին նա անշեղ
հետևել է իր ամբողջ գոյութեան ըն-
թացքում: Ուրախ եմ, որ այդ քաղա-
քականութիւնը արձագանք է գտել
Թաւրիչի հայ հասարակութեան մի
ստուար շնորհակց մասի մէջ, որի
ներկայացուցիչները կողմից ես ար-
ժանացայ այնքան ջերմ համկրութե-
ան:

Ընդունեցէք յարգանքներս

Հ. Առաքեան

ԼՈՒՐԵՐ

ԹԱԻՐԻՉ

Արամեան դպրոցի հոգաբարձու-
թեան նախաձեռնութեամբ Թաւրիչի
մի խումբ համակրողներ, 60-ից աւե-
լի և երկսեռ. նոյնի թատերասրահում
ամսույս 21-ի երեկոյեան տուին հա-
սարակական փառաւոր ընթերց ի պա-
տաւ. նշանաւոր հրապարակախօս պ.
Առաքեանին: Մանրամասնութիւնը,
թերես, յաջորդիւ: Սակաւ բացառութե-
ամբ, մասնակցողներն ամենքը Զա-
լայցիներ էին:

Յ. Պ. Ռ. Ժամհարեանը, յարգոյ
Դր. Ասլանեանի մեզ հաղորդածի հա-
մաձայն, 5 թիւ. նուրիւն է «Աղբա-
տախտում» ընկ-թեան, իւր հանգուց-
եալ կնոջ համար պատարագ անելու
փոխարէն:

ՅՏ Յայտնում ենք, որ նորեկնե-
րին մենակ և ինքնագլուխ չուղարկեն
Զալայի դպրոցները: Նորեկներին ու-
ղեկցելու են կամ ֆնողները և կամ
խնամակարները մինը:

ՅՏ Անտերունչ մեր թեմի արդի
սակաւանձնեայ վարիչների պնդագին
գիմումները Մաւրացոյ ազատման
մասին որոշ արգիւնքի չհասան, որ-
ովհետեւ հաճի թաղին վայելում է
կողմնակի պաշտպանութիւն: Առաջնոր-
դարանի վերջին գիմումին ի պատաս-
խան Շօջա-էդ-Դովլէն մի գրութեամբ
պատասխանել է, որ Մաւրացիք գնան
Խոյ՝ առ տեղեան քննութիւն կատարե-
լու: Երբ չկայ թեմ. խորհուրդ կամ ժո-
ղովրդական այլ ներկայացուցչութիւն,
կարծում ենք, մի քահանայի ոյժերից
շատ վեր է վարել Ասրայատականի
նման մի թեմի բարդ և յարաբերա-
կան կնճռալից գործերը: Արգոյ քա-
հանային կառավարիչինք ժամանակա-
ւորապէս կանչէր ազգեցիկ քաղաքա-
ցիները 10-15 հոգու և նոցա խորհրդ-
դակցութեամբ վարէր մեր թեմի գոր-
ծերը: Նոյն խորհուրդը կորոշէր կամ
կանչէր հին թեմակալին և կամ ըն-
տրել նորը, ապա թէ ոչ՝ ներկայ դը-
րութեամբ մենք կերթանք դէպի կոր-
ծանում և դէպի հիւծում:

ՅՏ Մի գրաւոր յայտարարութե-
ամբ հաճի Շօջա-էդ-Դովլէն թուրքե-
րին արգիւում է գնալ հիւրանոցներ,
Շէրէթի օրէնքին հակառակ համարե-
լով այդ:

ՅՏ Առաջնորդարանը ցարդ հրա-
ւեր չկարգաց ժողովի տառերի գիւտի
և տպագրութեան յորեկանի առթիւ:
Եթէ այդպէս դանդաղկոտութիւն էր
լինելու, ապա պէտք չկար վիժեցնե-
լայ մասին: Առաջնորդարանը շտա-
պելու է:

ՅՏ Կոհակի № 30 (105)-ից (Օգոս.
8/21 թիւ) իմացանք «Ազատամարտի»

Խափանման մասին Տաճիկ կառավա-
րութեան ձեռքով: Հակառակ լինելով
հանգրձ այդ թերթի ուղղութեան՝
ցաւում ենք նրա դադարման վրայ:

ՅՏ Տեղի սղութեան պաճառով
էլի մի կարգ հետաքրքրական արտա-
քին լուրեր մնացին:

ՅՏ Յաջորդիւ կհրատարակենք այն
խմբագրականը, որի համար Պօլսում
2ին. տառանի վճռով դադարեցուց
500 օսմ. սակիի տուգանքով «Նոր-Աշ-
խարհը», որի վերականգնում համար Հնչ.
Կուսակ. Տաճիկ-ի Վարիչ Մարմինը խն-
դիր է ներկայացրել օսմ. ներկայ կա-
ռավարութեան:

ՅՏ Մի հոգեւոր մի տեղեկութիւ-
նից իմանում ենք, որ Հնչ. Կուսակ.
Տաճիկ. Բ. Ընդհ. Պատգմ. Ժողովը 29
ձայնով (ընդդէմ 3-ի և 12-ի ձեռնա-
պահութեան) ջնջել է Հմ. Արամեա-
նանի կուսակցութիւնից չէզոքացման
և արտաքսման վճիռը: Լուրը ընդհ.
ուրախութիւն է առթիւ: Յայտնում
ենք և մեր ինդակցութիւնը:

ՅՏ Սփահարը Ասլամը ձերբա-
կալել և Ռուսաց է յանձնել Հաճի
Հուսէն Մարալանցուն, մեղաւոր
դեկտ. դէպքերին ուսաց վրայ
յարձակում գործելու մէջ:

ՅՏ Սփահարը Ասլամը կոչուած
է ֆարման ֆարմայէ քօլլ, փսկ
հաճի Շօջա-էդ-Դովլէն՝ Հօքէրա-
նի քօլլ:

ՅՏ Լուծւում ենք Սփահարը Աս-
լամը ամեն մի գործ յանձնում է
հաճի Շօջա-էդ-Դովլի վնասահա-
րեան:

ՅՏ Լուծւում ենք, որ Սփահարը
Ասլամի իշխանութեան ներքոյ
են գրուած՝ Ասրայատականի հետ
Գիլան և Մազանդարան նահանգ-
էր, որով զոգրուած է մի հսկայ
կուսակալութիւն:

Խմբագիր-հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱՐԻՉ ՄԱՐԿԵՐԻՆ

Կանացի հրաշալի բլուզներ, եգիպտական էշարփներ և վզկապներ,
կանացի քաթանէ կասթիւններ, Բաթիսթ գոյնգոյն կտորներ, փէշեր
և եուպկաներ, Չանապան արժէքի լիւրջիկներ:

Թարմ շվէյցարական շօկօլադ և բօմբօն:

ԴՕՔՏՕՐ ՍԱՐԳԻՍԸ

Ամեն ուրբաթ օրերը ժամը 2-ից, կէսօրից յետոյ, ձրի
խիում է աղքատների և չքաւորների երեխաների ծաղիկ-
ները:

ԾԱԽՈՒՏՈՒՆ

Թաւրիչի հայ հասարակութեան
ԵՍ ՄԱՆԻԱ ՆԱԶԱՐԵԱՆՍՍ ուղում եմ ծախել իմ հայրական տունը,
գնել ցանկացողները կարող են գիմել ինձ՝ Կէզրբանի ճանապարհի վրայ,
պարոն Առաքեւէնց խանութի մօտ, հանգուցեալ Միւրգայ Ասատուրէնց հին
տան գիմաց:

Տունը բաղկացած է երկու սենեակ և մի նախասենակից, երկու գեր-
զամուց՝ շինուած եփուած աղիւսով, մի ընդարձակ խոհանոցից, որ ունի
թոնիր: Տան ու բակի տարածութիւնը երկու լիտրից աւելի է:

ՎԱՐՁՈՒՏՈՒՆ

Վարձու է տրուած իմ նորաշէն, մաքուր և օգտաւոր տունը, ուր առաջ
բնակուած էր Դօքտոր Թրանսուր: Ցանկացողները թող գիմեն ինձ՝ Սամսոն
խան Մէշիգին կից:

Արեակ Թովմասէկեան